ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N -----Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԱՆՀԱՏՈՒՅՑՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (երաժշտական գործիքներ), ընդհանուր՝ 48487000 (քառասունութ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի _____ _____ի
N _____ որոշման

| Ապրանքանվանումներ և չափաքանակներ | | «Գ.Ալիևի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Մ. Մեսրոպի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Ս. Տատևացու անվան գեղարվեստական դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Ն. Գեղամի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Գ. Նարեկացու անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Գ. Չարենցի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Ս. Գրիգորի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Ս. Ավետիսյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Ս. Ֆիրսովի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Ս. Ֆարադժևի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ | | «Գ.Ալիևի Ա. Ալիխանյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Երևան համայնքի հաշվեկշռում առկա երաժշտական գործիքները (թվով 149 երաժշտական գործիք) Երևանի ենթակայությամբ գործող 24 երաժշտական և արվեստի դպրոցներին սեփականության իրավունքով անհատույց հանձնելու գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ: Որոշման ընդունման արդյունքում համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցները կհամալրվեն երաժշտական նոր գործիքներով, ինչը մեծապես կնպաստի Երևան քաղաքում գեղարվեստական կրթության համակարգի բնականոն գործունեության, մանուկների և պատանիների արտադպրոցական կրթության և գեղագիտական դաստիարակության շարունակական զարգացմանը, երաժշտական և արվեստի դպրոցների կողմից մատուցվող կրթական ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև կարևոր դերակատարություն կունենա մշակութային կրթության գրավչության մեծացման, շնորհալի և օժտված երեխաների երաժշտական ունակությունների բացահայտման ու զարգացման, շահառուների սոցիալական բեռի թեթևացման գործում:

Համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցներին սեփականության իրավունքով անհատույց հանձվող գույքը ձեռք է բերվել Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեում նախատեսված ծրագրի շրջանակներում, մրցութային կարգով և համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցներից ստացված պահանջագրերի հիման վրա: Երևան քաղաքի 2022 թվականի «Գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում» ծրագրի իրականացման արդյունքում ձեռք է բերվել 16 անուն 149 երաժշտական գործիք, որոնց ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 48487000 (քառասունութ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքը սեփականության իրավունքով հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ